

Унчукан.

Ревенчук.

891.99


lk - 44

1908р.

ԾԱՀ. 285

ՔԵՕՐՉԻԿԻ

ԱՆ-1334



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՈԽԱ» Գանովսկայա փող, 3.  
1908

891.99  
04-44

ՏԻՇ ՀԱՅ 2005  
19 NOV 2010

ԱՊՄ.

3-22042

3-22042

914

891.39

Դ. ԱՂԱՅԵԱՆ

Խ-44

Գ Ե Օ Ւ Ո Ղ Լ Կ

ԱՐԿԱԺՈՎԵՐ

Գ Ե Օ Ւ Ո Ղ Լ Կ Ա Կ Ե Վ Ք Ա Յ

- 
1. ՔԵՕՐՈՂԼԻՆ ԿԱԼԱՆԱԽՈՐ
  2. ՔԵՕՐՈՂԼԻՆ ԶԱՂԱՑՊԱՆ
  3. ՔԵՕՐՈՂԼՈՒ ԹՈՒՐԸ
- 

Նըւէլ հայ կտրիճներին

ԽԲ. № 21078

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՈԽԱ» Գանովսկայա փող.  
1908

06.02.2013.  
OROS VON B.

18.719

4 J P 0 9 0 d 4

卷之三十一

ИАНУАРИЯ ПЕРВОГО  
СЕНТЯБРЯ ПЕРВОГО  
СУДИИ АДРОТОМ



39501-65

**ՔԵՐՈՎԼԻՆ ԿԱԼԵՆԵՒԹ**

Քեօրօղլին զող չէր և ոչ աւագակ, այլ մի  
լինքնագլուխ իշխան, իսկ այդ անկախութեանը  
հասել էր նա իր անվեհերութիւնովը և քաջա-  
զործութիւններովը։ Նա չէր յափշտակում և կո-  
ղոպտում, այլ հարկ ու մաքս էր առնում և ը-  
տողներին անխնայ պատժում։ Բայց իրանի թա-  
գաւորը նրան համարում էր աւագակ։ այսպէս  
էին ձանաշշում նրան և սուլթաններն ու խալիֆ-  
ները, որոնց կարծիքը Քեօրօղու համար նշանա-  
կութիւն չունէր։ Նա այսպէս էր դատում—

«Եթէ հարկ առնելը մեղք է, ինչու իրանք  
առնում են. Եթէ հնազանդելը լաւ բան է, ին-  
չու իրանք ինձ չեն հսագանդում: Իրանք գոռով  
ու բռնութեամբ են տիրում աշխարհին, ես է  
իրանց պէս կը վարեմ: Այդ բարեարոս աւա-  
զակները իրանց աչքի գերանը չեն տեսնում,  
բայց համարձակում են իմ աշրումը շնոր գտնել  
իրանք իրանց աւազակ չեն համարում, չը նա-  
յած, որ նոյն խակ Աստուծու փառքն են յափշ

տակում, իսկ ինձ՝ Աստուծու ամենախոնարհ ծառայիս՝ համարում են աւազակ։

Այսպէս էր գատում Քեօրօղին, իբրև բնութեան պարզ որդի, որի գլուխը լցւած չէր զանազան կանխակալ կարծիքներով։

Բայց ամենայն օր գանգատ ու բողոք էր, որ անընդհատ հասնում էր իրանի թագաւորին, որին յանդիմանում էլ էին, թէ եթէ դու ես մեր թագաւորը, ազատիր մեզ Քեօրօղու ձեռից, որ քեզ ծառայենք, իսկ եթէ ոչ մենք կամայ ակամայ պիտի Քեօրօղուն հպատակենք, նրան ծառայենք։ Եւ ահա ինչ էին ասում իրանց գանգատներում Քեօրօղու մասին —

Նա, ասում էին, թալանում է քարւանները, գերի է տանում հարուստ վաճառականներին և մինչև մեծ փրկանք չի առնում, բաց չի թողում։

Գիւղացիներին ոտքի է կանգնեցնում իրանց խաների ու բէգերի դէմ, կոտորում և կոտորել է տալիս կալւածատէրերին ու տէրութեան կապալառուներին, և այսպէսով իր կողմն է զրաւում երկրագործ ժողովրդին, Կոտորում է հարկահաններին և հաւաքած հարկերը բաժանում շրաւոր գիւղացիներին։

Շատ անգամ կարում է գիւղացոց յարաբերութիւնը քաղաքացոց հետ, ուտեսափ պաշարը թանգացնում, և մինչև քաղաքներից մեծ վճար չի առնում, յարաբերութեան կապը չի արձակում։

Քրիստոնեաներին առանձին պաշտպանութիւն է ցոյց տալիս նրանց պաշտպանութիւնը, դանում ամեն տեղ։

Որտեղ մի կարգէ գուրու քաջ տղամարդ կայ, վնասում է Քեօրօղու գրաշակի տակ մտնում։ Որտեղ մի փախստական և մահապարտ կայ, նրա հովանաւորութեանն ու պաշտպանութեանն է զիմում։ Այսպէսով նա կազմակերպած խումբեր ունի երկրի բոլոր ամուր տեղերում։ Բոլոր անմատչելի բերգերին ախրելով՝ ամենի վրայ իր անունն է զրոշմէլ։ Բոլոր խումբերն իրար հետ սերտ կապ ունին, և հարկաւոր դէպքերում միմեանց օգնութեան են հասնում։

Ամեն հաւատի ու ցեղի մարդ կայ նրա խմբի մէջ, բայց միանգամ այդ խմբի մէջ մտնելով՝ ոչ մի հաւատի չեն ծառայում, ամենքն էլ միապէս դառնում են անհաւատ և ծաղրում ամեն հաւատ։ Չեն ընդունում միայն այն մարդիկը, որոնք որ և է քաջութիւնով իրանց յայտնի չեն կացուցել, կամ որ և է դժւար յանձնարարութիւն և փորձ չեն կատարել։ Ինքը պաշտելու չափ սիրում է ամեն մէկին և ամենի յիմար կամքը կատարում, նոյն իսկ իր կեանքը վտանգի տակ դնելով։ Բոլոր սիրահարներին իրանց մուրազին է հասցնում, բերելով նրանց սիրոյ տարկան։ Ինքն էլ ամեն մի բերդում մի առանձին սիրուհի ունի։ Իրանց սիրուհիները վակւած չեն պահուում, նրանք պարտաւոր են զինավարժութեամբ պարապել, ձիա-

Ժարութիւն դիտենալ և հարկաւոր դէպքերում  
քաջութեամբ կուել, Այս կերպով ահա նա հա-  
ւաքել է երկրի ամենազեղցիներին և ամենա-  
քաշերին, որոնք հմայւածի պէս անձնւիրութիւն  
են ցոյց տալիս նրան, և անհաւատ լինելով՝ նրան  
միայն հաւատում ու սիրում:

Քօրօղին ամենից շատ վաս էր հասցնում  
Իրան աշխարհին, Այդ ատելութիւնը ժառանգո-  
կան էր, հօրից որդուն անցած։ Բայց Քեօրօղլուն  
ժամանակակից Իրանի թագաւորը մի վեհանձն  
մարդ էր։ Նա երբ որ լսում էր Քեօրօղլու քո-  
ջութիւնը, մաքումն առում էր. «Եթէ ես թագա-  
ւոր չը լինէի, ամենայն ուրախութեամբ Քեօրօղ-  
լու քաջերից մէկը կը դառնայի, նրա պէս ազատ  
կեանք կը վարէի»։ Իյո սկատճառով նա ահաղին  
զօրքով, (մօտ երեսուն հազար հոգուց բաղկացած)  
ուղարկեց իր ամենից փորձառու զօրապետին—  
Բօլի բէկ անունով և պատւիրեց նրան, որ Քեօ-  
րօղլուն կալանաւորէ, պաշարելով այն բերդը,  
ուր որ նա կը լինի։ Սպանելու հրաման չը տւառ,  
ընդհակառակը, տաեց, որ եթէ Քեօրօղլուն սպա-  
նես, քեզ կախաղան կը բարձրացնեմ. եթէ քաջ  
ես, նրան պէտք է բերես ինձ մօտ ողջ առողջ։

Իրանի թագաւորը չէր ուզում զրկվիլ Քեօ-  
րօղլու պէս մի անւանի հերոսից, և ուզում էր  
նրան իր մօտ տանել և նրանով յաղթել իր ար-

տաքին թշնամիներին։ Բօլի-բէզը նախ պիտի աշ-  
խատէր զանազան խոստումներով Քեօրօղլուն  
հրաւիրել շահի մօտ, իսկ եթէ այդ չը յաջողէր,  
միայն այն ժամանակ պիտի զործ գնէր իր ա-  
հագին բանակի ուժը։ Քեօրօղին այդ ժամանակի ուժը  
Քեօրօղին այդ ժամանակ գտնուում էր մեր  
երկրումը, որ Իրանի իշխանութեան տակն էր։  
Երբ էր այդ ժամանակը, յայտնի չէ, և ոչ տեղն  
է յայտնի որոշակի։

Թագաւորի մտադրութիւնը Քեօրօղլու մա-  
սին թէսէտ անկեղծ էր, նա անշուշտ մեծ պատ-  
ուի կը հասցնէր Քեօրօղլուն, բայց Քեօրօղին ա-  
ւելի լաւ էր համարում Հայաստանի հռվասուն  
լիոներում ազատ աւազակ համարւիլ, քան թէ  
շահնշահի եռապարիսպ պայտատում նոյն իսկ շահ  
լինել, ուր մնաց, որ ինչքան էլ մեծ իշխան լի-  
նէր, դարձեալ շահի ստրուկը պիտի համարւէր։  
Լինել հպատակ, թէկ հազար ու մէկ շքանշանով  
զարդարւած՝ ատելի էր բնութեան ազատ զաւակին։

Քեօրօղին սովորութիւն ունէր շատ անդամ  
ծպտած ման գալու։ Նստում էր մի իշի կամ ջո-  
րու վույ, աշըղի հագուստով (աշըղները ջոկ հա-  
գուստ ունէին հնումը), սազը մէջքից կախած,  
առանց որ և է զէնքի և զիւղէզիւղ թափառելով,  
զանազան տեղեկութիւններ էր հաւաքում, և ըստ  
այնմ իր զգուշութիւնը զործ գնում և անելիքն  
անում։ Մէկ անգամ էլ հէնց այսպէս ծպտած  
ժամանակ լսում է, որ Բօլի-բէզը եկել է մեծ

զօրքով և բանակ է դրել Թօնա զետի մօտ, Եկել  
է ոչ իբրև զօրքով պատերազմ, այլ իբրև մի ցե-  
ղապետ իր ժողովրդով ամարանոց, իր հետ բե-  
րել է և իր կանանցը: Բոլոր հարիւրապետներն  
ևս բերել են իրանց գերգաստանը, որով կազմել  
են մի թաթարական օրդու: Իրանց հետ ունին  
նաև ոչխար, տաւար, ուղտեր և ամենայն ինչ:  
Ի հարկէ այս աւելորդ բաներն այնքան շատ  
չէին, որ իսկոյն չխմացւէր, թէ սա մի խաշնա-  
րած ժողովրդի չւումն չէ մի տեղից միւս տեղ,  
այլ պատերազմական նպատակ ունեցող մի բա-  
նակ է:

Քեօրօղին, առանց երկար մտածելու, իր  
ջորին քշում է ուղիղ դէպի այդ բանակը, որ  
կշռէ նրա որպիսութիւնը: Հէնց որ նրան տես-  
նում են, իբրև աշըղի, ամեն մէկն իր կողմն է  
քաշում և հրաւիրում, բայց Քեօրօղին ոչ մէկին  
չի լսում, քշում է ջորին և իջնում զօրապետի  
վրանի առջև: Բօլի-բէզը շատ ուրախանում է և  
հրամայում է նրան ցոյց տալ իր շնորհքը, գւար-  
ձացնել իր խաղերով, և եթէ գիտէ, Քեօրօղու-  
խաղերիցն ասէ: Այս առաջարկութիւնից օգուտ  
քաղելով՝ Քեօրօղին ասում է հետեւալ խաղը  
մեղմացնելով իր ահեղ ձայնը, որ չը ձանաչփ:

Ո՞վ կաք այս բանակում իմ ծանօթներից,  
Շուտով իմ քաջերին մի լուր հասցըրէք.  
Թող յարձակւին ամեն կողմից խմբերով

Ինձ էլ մէկ վահան ու մի թուր հասցըրէք.  
Հասէք, շուտով հասէք,  
Մի լուր հասցըրէք:

Ասեցէք՝ Եկել են գեղնած բօստանչիք,  
Արխաջրով փորերն ուռած թուլուղչիք,  
Սուր չը տեսած, բանից փախած փինաչիք,  
Եկէք այս խեղճերին առողջացըրէք.  
Հասէք, շուտով հասէք,  
Մի լուր հասցըրէք:

Զեն ձանաչում արծիւն ագուաւի շորում,  
Զորս կողմից ծաղրում են ու կացահարում,  
Քեօրօղուն բանելու թակարդ են լարում,  
Եկէք սրանց զլխում մի խելք մտցըրէք.  
Հասէք, շուտով հասէք,  
Մի լուր հասցըրէք:

Քեօրօղու խաղի միարը լաւ հասկացան նրա  
բարեկամ լրտեսները և շտապեցին լուր տանելու  
նրա քաջերին: Բայց Բօլի-բէզն ևս կասկածի ե-  
կաւ, թէ սա ինըը չէ արդեօք Քեօրօղին, և  
հարցըրէց:

— Աշը, այդ խաղը երբ է ասել Քեօրօղին:  
Քեօրօղին պատասխանեց.  
— Միթէ քեզ յայտնի չէ, խան, որ փաղի-  
շահը քանիցս անգամ ուզեցել է կալանաւորել  
Քեօրօղուն. մէկ անգամ էլ Բօլի-բէզին է ու-  
ղարկում մեծ զօրքով: Քեօրօղին աշըղի հագոււ-

տով պատահմամբ ընկնում է նրա բանակը, ուր  
և սառում է այս խաղը, որով իմաց է տալիս իր  
քաջերին, թէ ուր է ընկել ինքը, և նրանք ել  
դալիս են ազատում:

—Այդ Բօլի-բէզը չի լինում, աշըդ, այլ գու-  
ցէ վէլի բէզը լինի եղած: Բայց դու այս ասա,  
ինչնի ես հաստատում, որ դու ինքը չես Քեօ-  
րողին, որովհետև ինքը քեզ մատնում ես, խոս-  
տավանւելով, որ Քեօրօղին երբեմն ծպտելով  
աշըդութիւն էր անում:

—Խան, հէնց այդպէս ել հարցրել է Բօլին,  
և տեսէք՝ Քեօրօղին ինչ է պատասխանել —

Ինչով ուզես, Բօլի, ես երդում կուտեմ,  
Որ ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղին.  
Երկինք, գետինք, Աստւած վկայ կը կանչեմ,  
Որ ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղին.

Հայ եմ, հայ, հարայ,  
Հայ եմ, ուղիղ հայ:

Հայի ձեռին դու չես տեսնիլ սուր ու թուր,  
Այդ բանն արգելել է մեր մեծն Այսմաւուր,  
Թէկուզ գլխիս թափես հազար թուք ու մուր,  
Ես մի անբախտ հայ եմ և ոչ Քեօրօղին.

Հայ եմ, հայ, հարայ,  
Հայ եմ, ուղիղ հայ.

Եթէ թուրը ձեռին Քեօրօղուն տեսնես,  
Հաւատա ինձ, Բօլի, դու կը սարսափիս,

Թէպէտ սակ էլ ունի, երգում է ինձ պէս,  
Բայց ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղին,  
Հայ եմ, հայ, հարայ,  
Հայ եմ, ու ուղիղ հայ:

—Սպասիր, աշըդ, ասում է Բօլին, այդ իմ  
հարցի պատասխանը չէր, ես կակական Բօլի-բէզն  
եմ և ոչ Ալին կամ Վէլին, և հիմա ուղղակի  
հարցնում եմ քեզ. ինչնի ես ապացուցանում, որ  
դու Քեօրօղին չես:

—Խան, ես այգպէս չը հասկացայ, պա-  
տասխանեց Քեօրօղին, ես հէնց իմացայ, թէ  
դու Բօլի-բէզի հարցումը արւիր, ես էլ Քեօրօղ-  
յու պատասխանն ասեցիր, Եթէ ինձ վրայ կասկած  
ունիս, որ մաքովս անցնել չէր կարող, ուրեմն  
լսիր իմ պատասխանը:

Քեօրօղին ուզում էր միայն զբաղեցնել  
Բօլի-բէզին, մինչև կը հասնեն իր քաջերը, բայց  
և այնպէս, նա այլ ես չի ուզում իրան նւաս-  
տացնել և յայտնում է, թէ և մութ կերպով, որ  
ինքն է Քեօրօղին և ունի հայկական ծագումն:

Ես մի Զալալի եմ, անունս է Ռուշան,  
Հօրս անունս է Խոր \*, մօրըն՝ Խորիշան.

\* Աւանդութիւն կայ, որ Ռուշանի հայրը քեզ ը  
չի եղել, որ կը նշանակէ կոյր, այլ Խոր կամ Խոս, որ  
մի հայ է եղել Խորիսոսւնեաց ցեղից, բայց աւազակ  
դառնարով՝ խառնել է Զալալի ասւած քրգական ցեղի  
հետ և համարւել քուրդ կամ թուրքմէն: Այդ ժամա-  
նակ ահա նրա Խոր անունը աղստաղւել դառել է քեօր  
և յետոյ էլ կարծւել է, թէ նա կրյը է եղել...

Արհեասով աշըղ եմ, ինչպէս տեսնում էք,  
Որ ես Քեօրօղին չեմ, ահա ձեզ նշան:

Կանչում եմ նշան նշան,  
Պատմում եմ նշան նշան,  
Մարդն ունի մարդու պատկեր,  
Շունն էլ ունի շան նշան:

Եթէ իրաւ ես լինէի Քեօրօղին,  
Իմըս լինէր նրա թուրը, նրա ձին,  
Ոյն ժամանակ կը տեսնէիր, Բօլի-բէզ,  
Որ Քեօրօղուց պակաս քաջ չէ Խօրօղին:

Չեմ թաքցընում, խոր եմ խոր,  
Իմ թշնամուն խորեմ խոր,  
Աղբիւրի պէս բարակ եմ,  
Շովի նման խոր եմ, խոր:

Քեօրօղին է իմ սիրելին, իմ խանը,  
Ես նրա երգիչն եմ, նա իմ պաշտպանը,  
Նրա ահեղ ձայնը միայն լսելով՝  
Դողում, զարհուրում է ողջ Պարսկաստանը:

Վախ չունիմ մահ ու ահից,  
Ազատ եմ մահու ահից,  
Մարդիկ մահով չեն մեռնում,  
Այլ միայն մահու ահից:

Խօրօղին եմ, ոչ մի բանից ահ չունիմ,  
Ինքս մեծ իշխան եմ, թէս դահ չունիմ,

Թող ողջ լինի միայն իմ դօչ Քեօրօղին,  
Սուլթան ու խաներից ոչ մի շահ չունիմ.

Չեմ սիրել խան ու սուլթան,  
Կատեմ իշխան ու սուլթան,  
Խան կայ՝ մի խան չարժէ,  
Սուլթան կայ՝ անուս—ուլ—թան:

Այս երգից յետոյ Բօլի-բէզն ասում է.

— Աշըղ, իրաւ որ դու քուրդ ես ու քըդա-  
վարի էլ խաբում ես ինձ: Եթէ դու Քեօրօղին  
չես, այլ Խօրօղին, այդ ինձ համար միենոյն է,  
Երկուսդ էլ վտանգաւոր էք: Ես Խօրօղուն կը  
բանեմ, թող Քեօրօղին դայ նրան ազատէ:

Այս ասելուց յետոյ՝ Քեօրօղու ոտները կա-  
պել է տալիս, ուղում է կապել տալ և կոները,  
բայց Քեօրօղին խնդրում է, որ կռներն ազատ  
թողնեն ու ասզը ձեռքիցը շառնեն ասելով—

— Խան, այս շատ մեծ պատիւ է, որ ինձ  
տալիս էք: ասած է՝ «մէկ օրւայ խանութիւնն էլ  
է խանութիւն»: դուք մէկ օրով ինձ Քեօրօղի  
էք շնում, թոյլ տէք ուրեմն Քեօրօղու խա-  
ղերիցն ասեմ ձեզ համար, մինչև կը բռնէք իս-  
կական Քեօրօղուն և խեղճ աշըղիս կազատէք:

Եւ Քեօրօղին սկսեց բուն Քեօրօղու ահեղ  
ձայնով հետևեալ խաղը.

Բօլի, նամազդ արա, մեղքերդ քաւի,  
Հրէս որտեղ որ է՝ քաջերըս կը դան:

Դագաղըդ շինել տուր, պատանըդ կարի,  
Հրէս հոգիդ առնող դէւերըս կը դան.  
Եկէք, քաջեր, եկէք,  
Ել մի ուշանաք:

Մէկ կայ հազար արժէ, հազար կայ ոչ մին,  
Ամբողջ բանակովդ չարժես իմ մէկին.  
Գերանդիով, թոփուզներով ահազին,  
Հրէս կացնով ջարդող գիտերըս կը դան.  
Եկէք, քաջեր, եկէք,  
Ել մի ուշանաք:

Քեօրօղլուս աթուն է անառիկ Ստուն,  
Հսկաներիս թիւն է մինչև քառասուն.  
Լացէք գլուխներըդ, ով դուք անասուն,  
Հրէս ձեզ պատառող վագրերըս կը դան.  
Եկէք քաջեր, եկէք,  
Ել մի ուշանաք:

Քեօրօղլու անեղ ձայնից ոչ միայն մարդիկ  
սարսափեցին, այլ և բոլոր անառունները, որոնք  
կարծեցին թէ առիւծ է մոնչում: Սաստիկ վա-  
լեցաւ և ինքը Բօլի-բէզը, բայց ինքն իրան ան-  
հոդ ձևացրեց, չուզենալով հաւատալ, թէ նա  
ինքն է Քեօրօղլին: Այս միջոցին Քեօրօղլու աչ-  
քը պատահամբ ընկաւ դէպի վարագոյրը, (որի  
ետեւ ծածկւած էին Բօլի-բէզի կանայքը և ծա-  
կուծուկերից նայում էին Քեօրօղլուն ու հիա-  
նում) և մէկի սիրունիկ աչքերը տեսնելով, մո-

ուցաւ իր քաջերին, և սկսեց իր երգը դէպի  
նոյն գեղեցկուհին գարձնել.

Ամպերում թաքնըւած, իմ սիրուն արև,  
Մէկ փայլում ես, մէկ էլ ծածկւում խաւարում.  
Վանդակի մէջ զրւած սոլսակի նման,  
Մէկ երգում ես, մէկ էլ լրում ու տիրում.  
Ինչու, հոգիս, ինչու,  
Ինչու ես տիրում:

Արևագուրկ ծաղիկ, անջուր, թալկահար,  
Վարդ, գու կուզես քեզ մի բիւլբիւլ սիրահար.  
Ագուս մարդըդ քեզ անում է կացահար,  
Դիտէ որ գու իրան սրտով չես սիրում:  
Ինչու, հոգիս, ինչու,  
Ինչու չես սիրում:

Քեօրօղլուս պէս մի քաջի ես գու արժան,  
Որ գրախտ գարձնեմ այդ կեանքըդ դաժան,  
Դու կը լինիս իմ սիրուհիս անբաժան,  
Այժմէն իսկ իմ հոգին քեզ եմ նըւիրում.  
Հաւատա ինձ, հոգիս,  
Քեզ եմ նըւիրում:

— Լոիր, յանդուգն, բղաւեց Բօլի-բէզը լսան-  
գուտոթիւնից կատաղած և հրամայեց կապուել  
Քեօրօղլու կոները: Քեօրօղլին ոչ մի ընդդիմու-  
թիւն ցոյց չը տւաւ: Նա այդ բոլորը մի կատակ  
էր համարում, իսկ նրանց թոկերն իր համար մի  
ամրդի ոստայն:

Քեօրօղլու ձեռք ու սաքը կապուելուց յետոյ, մի թոկ էլ վզիցը կապեցին և Բօլի-բէզի հրամանով տարան թօնա գետի տվը, որ նրան ընկղմեն գետի մէջ առանց խեղելու, այլ այնքան ընկղմեն և հանեն, մինչև ուժից ընկնի իւսպառ և ուղիղը խոստովանի, եթէ ինքը ճշմարիտ Քեօրօղլին է:

Գետափին ձիաներ կային օրուգ տւած: Հէնց որ մօտեցաւ այդ ձիաներին, թոկերը կտրտեց, իր տանողներին քարերի պէս շղուեց գետի մէջ, իսկ ինքը մի ոստիւնով թռաւ մի լաւ ձիու վրայ և անթամք ու անսանձ ձիու գլուխը երկու ձեռքով իր ուզած կողմն ուղղելով, դուրս պրծաւ բանակից: Այս անակնկալ գէպքի վրայ ամենքն էլ շփոթւեցին ու շակւեցին, բայց մէկ էլ որ տեսան հեռւից մի թանձր փոշի բարձրացած վագում է գէպի իրանց այնպէս արագ, որ կարծես նրան մղում էր մի աճեղ փոթորիկ, բոլորովին սարսափի մէջ ընկան:

Այդ թոգն ու գումանը բարձրացը էլ էին Քեօրօղու քաջերի ձիաները, որոնք գալիս էին սրարշաւ և նրանց տրոփիւնի ձայնը արդէն մինչև բանակն էր հասնում: Բօլի-բէզը, որ Քեօրօղլու կողմից յարձակւելու յոյս չունէր բոլորովին, և ով կը համարձակւէր մի փոքրիկ խմբով ամբողջ բանակի վրայ յարձակւել, շուտով պատրաստեց դիմաղրելու: Բայց ինչ օգուտ: Եկողները հաղարներից ընտրւած մի մի դիւցազն էին, և ի-

բանց քաջութեան համեմատ մի-մի սարսափելի մականուն ունէին շքանշանի տեղ ստացած, ինչպէս՝ Վարազաթուր, Գայլաբերան, Փղակնձիթ, Վագրատանգ, Առիւծաթաթ, Անսասան, Զարճուրելի, Աւաննբալա (առիւծի ձագ), Քեաքեագան (միեղջերու), Ազբայլ (չար հրեշտակ), Ղըլազան կամ Ղըլսուան (քառասունին ջարդող): Քեօրօղլին չունէր ոչ մի մականուն, բայց երբեմն անւանում էր չասարնչացք և Աճեղաձայն:

Քեօրօղլին արդէն նստել էր Ղութի վրայ և ձեռքն առել իր վահանն ու թուրը: Նա գալիս էր ամենի առջեր: Բանակին մօտեցան թէ չէ այնպէս յարձակւեցին, ինչպէս ժիր հնձողները հասած արտի վրայ, և սկսեցին հնձել անխնայ: Զիաւորները հնձում էին, իսկ ձիաները ոտնատակ տալիս, կտում: Հնար չը կար դիմադրելու, զօրքը երեսը շրջեց և փախուստ տւաւ: Փախաւ և Բօլի բէզը, բայց նրան շրջապատեցին և կալանաւորեցին: Քեօրօղլին ազատեց նրան, միայն կանայքն առաւ ձեռիցը և բաժանեց իր քաջերի մէջ վիճակով: Ինքը չառաւ ոչ մէկին, որ իր Նիգեարի սիրտը չը պակսեցնէ: Բացի Նիգեարից, որին սիրում էր բոլոր սրտով, ուրիշ կին չունէր, թէպէտ կարծում էին, որ նա շատ կանայք է պահում:

Այս փառաւոր յաղթութիւնից յեսոյ երբ որ վերադարձաւ տուն, Քեօրօղլին մի փառաւոր ինչոյք տւաւ, երգերով պատմեց Նիգեարին բու



լոր անցքը և անուն անուն գովեց իր քաջերին,  
մէկ մէկ թւելով ամեն մէկի արածը: Նիզեարն  
էլ ի նշան չողհակալութեան մի ահագին բաժակ  
լցնում էր գինով և իր ձեռքով տալիս ամեն մէ-  
կին: Գերի ընկած սիրուն տիկիններն էլ շատ  
ուրախ էին, որ գերւելով, ազատել են իսկա-  
կան գերութիւնից, և փոխանակ ամենքը միասին  
մի վատոյժ մարդ ունենալու, հիմա ամեն մէկը  
միայնակ կունենայ մի հերոս:

Մեր քաջերն իրանց խնջոյքը վերջացըին  
հետեւեալ պարզ երգով, որ երգեցին ամենքը  
միատեղ մի ուրախ եղանակով—

Հայրը պատերազմ գնաց,  
Որդին ծածուկ հետեց,  
Հօր գլխին սուր պըսպըզաց,  
Որդին նրան ազատեց:  
Այ բախտ, դրախտ,  
Դրա—րա—րա—րախտ:

Հայրը որգուն գիրկն առաւ,  
Նրա ճակտից համբուրեց.  
Որդին թուրը ձեռքն առաւ,  
Հօր թշնամուն խորտակեց.  
Այ բախտ, դրախտ,  
Դրա—րա—րա—րախտ:

Մայրը շատ ափսոսում էր,  
(Որդին էր գեռ պատանեակ)

Նրա համար հիւսում էր  
Թարմ ոստերից մի պսակ:  
Այ բախտ, դրախտ,  
Դրա—րա—րա—րախտ:

Որդին եկաւ յաղթական,  
Հետն էլ բերաւ դեռահաս  
(Իր մօր համար օգնական)  
Մի դեղեցիկ նորահարս:  
Այ բախտ, դրախտ,  
Դրա—րա—րա—րախտ,

Մայրը եփեց ձըւոձեղ,  
Ուտեցրեց երկուսին,  
Յետոյ շինեց փափուկ տեղ,  
Պատկեցրեց միասին:  
Այ բախտ, դրախտ,  
Դրա—րա—րա—րախտ:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Աշըդները երբ որ պատում են այս ար-  
կածը և վերջացնում, սովորաբար մի խրատա-  
կամ ծիծաղաշարժ խաղ էլ իրանցից են ա-  
սում կամ նոյն խակ Քեօրօղու ասածներից ու-  
րիշ դէպքում: Իբրև օրինակ՝ բերենք հետեւալ  
խաղը:

Ով որ ձուկ բոնել չը գիտէ,  
Կարթի պատիւն ի՞նչ կիմանայ.

Խըխունջներից գոհ եղողը  
Թարթի պատիւն ի՞նչ կիմանայ.

Ո՞վ է տեսել փայտից մաշա,  
Կամ բօշայից դառած փաշա\*:

Ով սիրում է փթած հինը,

Զի հասկանու նորի զինը.

Քուչէքն ընկած թեթև կինը

Մարդի պատիւն ի՞նչ կիմանայ:

Քուրդը չի սովորիլ փեշակ,

Պղպեղը չի դառնալ մեխակ,

Ագուաւը որ դառնայ սոխակ,

Վարդի պատիւն ի՞նչ կիմանայ:

Սուտ չէ Քեօրօղու ասածը,

Նրա երգածն ու խօսածը,

Փալաներում մեծացածը

Զարդի պատիւն ի՞նչ կիմանայ:

Աքաղաղը չէր հաւանում սոխակին,

— Կուզես, ասեց, հարցնենք աւանակին.

— Ո՞չ, ոչ, պատասխանեց սոխակը,

Ես աւելի հաւան եմ քո ճաշակին...

\* Ամեն տնավերջում, ըստ կամի, աւելացնում  
են այսպիսի ասածներ:

Դամ ամ ամուս պարհու ընթան ամուս  
բայց ու ս բժամին ու ամուս պարհու ամուս  
բայց պարհու բայց ու ամուս պարհու ամուս  
բայց ու ամուս պարհու բայց ու ամուս պարհու ամուս  
**ՔԵՕՐՕՂԻՆ ՀԱԼԱՅՊԱՆ**

Մէկ անգամ Քեօրօղու ծառաներից մէկը՝  
Քաշալ-Համզան՝ փախել էր: Քեօրօղին հեծաւ  
իր հոչակաւոր Ղոաթը, և ընկաւ Համզայի ետե-  
փց, որ բռնէ նրան և պատժէ:

Համզան դեռ շատ չէր հեռացել, նա յետ  
մտիկ տըւաւ ու տեսաւ որ հեռւից փոշի է բար-  
ձրանում, իսկոյն գլխի ընկաւ, որ Ղոաթի բար-  
ձրացրած փոշին է այն, ուր որ է՝ Քեօրօղին  
պիտի հասնէ և բռնէ նրան: Հնար չըկար փախ-  
չելու: Նրա բախտից նոյն տեղը մի ջաղաց կար,  
փաղից մտաւ ջաղացը, երես-մերեսը ալըրաթա-  
թախ արաւ, շորերն էլ նոյնպէս, և այսպէս կեր-  
պարանափոխած՝ դուրս եկաւ կանգնեց ջաղա-  
ցի դռանը:

Քեօրօղին ձին քշած եկաւ, և Համզային  
պատահելով հարցրեց, թէ այս նշանով մարդ  
չանցամաւ արդեօք:

— Ինչպէս չէ, պատասխանեց Համզան. քո  
ասած նշաններով մի մարդ մտաւ այս բողէիս  
իմ ջաղացը:

— Ուրեմն բռնիր ձիս, ասաց Քեօրօղին, և  
իջաւ ձիուցը:

Զին թողեց Համգայի ձեռքին, իսկ ինքը  
մտաւ ջաղացը, տեսաւ որ այնտեղ ոչ ոք չըկայ,  
դուրս եկաւ որ բարկանայ ջաղացպանի վրայ.  
բայց կեղծ ջաղացպանը արդէն Դուաթի վրայ էր:

— Անպիտան, ինձ խաբեցիր բաւական չէ,  
համարձակեցար հեծնել նաև իմ Դուաթիս, ասաց  
Քեօրօղին բարկութեամբ:  
— Շատ մի խօսիր, պս ատախանեց Համգան,  
— այժմ՝ Քեօրօղին ես եմ, իսկ դու գնա ջա-  
ղացպանութիւն արա, նայիր միայն, որ լաւ ա-  
դաս, կզրկու չանես: Այս ասելով Դուաթի գլուխը  
շրջեց ստահակ ծառան, և այսօր ես անյայտա-  
ցել թէ եգուց...

Քեօրօղին նոր զլիի ընկաւ, որ փախչողը  
Համգան էր, բայց էլ ի՞նչ կարող էր անել: Նա  
քան քան ծիծաղելով իր միամտութեան վրայ,  
գլուխը թափ տըւաւ և մտաւ ջաղացը:

Քեօրօղին սովորութիւն չունէր յուսահատ-  
ւելու, այս տեսակ դէպքերը նրա միշտ ուրախ  
ու գւարթ արամադրութիւնը չէին խանգարում:  
Նա տեսաւ որ ամբարը լիքն է ցորենով, բայց  
ջաղացպանն ուրիշ տեղ է գնացել, չուրը կապեց  
նաւի մէջ, բան ձգեց աղօրիքը: Եըբ որ չախ-  
չախն սկսեց իր ներգաշնակ չլուզբիկոցը, Քեօ-  
րօղին նրան սազի տեղ համարեց և սկսեց եր-  
գել հետեւալ երգը—

Այ Քեօրօղի, ջան Քեօրօղի,  
Այ Քեօրօղի, ջան Քեօրօղի,

Քեղ խաբեց Համգան Քեօրօղի, հայ, հայ, հայ..  
Բայց որ դառել ես ջաղացպան,  
Կանչիր թող գայ դան Քեօրօղի, ջան,  
Ջան Քեօրօղի, ջան,  
Ջան Քեօրօղի:

Մարդուս բախտն էլ ահա այսպէս,  
Պարտում է ջաղացի պէս,  
Մէկ օր ահռելի վիշապ ես,  
Միւս օր ջաղացպան Քեօրօղի:

Բայց գու էլի Քեօրօղին ես,  
Ժողովրդի սիրելին ես.

Թէկուզ ջաղացպան էլ լինես,  
Քեղ պատիւ կըտան Քեօրօղի:

Թէկ Դուաթիցըդ զրկւած,  
Բայց թուր ունիս վըրադ կապւած.  
Համգան ստրուկ, թոկից փախած,  
Իսկ դու ազատ խան Քեօրօղի:

Մօռդ կանչիր հըսկաներիդ,  
Հաւատարիմ կտրիճներիդ,  
Թող գան գտնեն փախած գերիդ,  
Չըկորչի Համգան Քեօրօղի:

Քեօրօղլու ձայնը շատ ահեղ էր. այս երգը  
երգելուց յետոյ՝ բարձրացաւ ջաղացի տանիքի  
վըրայ և այնպէս որոտաց, որ նրա ձայնը սար-  
ու ձոր դրմբացնելով՝ հասաւ մինչև Զամլիքէլ,  
ուր գանւում էր Քեօրօղլու անմատչելի բերգը:  
Քեօրօղլու կինը, Նիգեար խանումը, որ շատ  
սուր լսողութիւն ունէր, ամենից շուտ իմացաւ  
որ իր ամուսինը մի անակնկալ փորձանքի է  
հանդիպել: Իսկոյն իմաց տռաւ քաջերին, որոնք  
մի ակնթարթում դուրս թափեցին բերգից և  
հասան իրանց խմբապետին: Դրանց մէջ նշանա-  
ւոր էին Դամիւրջօղլին, Խոտր-Ալին և Գգիր-օղլի  
Մուստաֆա-բէզզը: Երբ որ գնացին տեսան Քեօ-  
րօղլուն ջաղացպանութիւն անելիս, Դութը խլել  
տռւած, շատ ծիծաղեցին, և Դամիւրջօղլին մի  
երգով շնորհաւորեց Քեօրօղլու նոր արհեստը և  
նոր առուտուրը: (Որովհետեւ Համզան Դութը  
փախցնելով՝ նրա փոխարէն իր ջորին թողել էր  
նրա մօտ):

Թող երգէ Դամիւրջօղլին, տեսնենք ի՞նչ է  
երգում և ինչ ձեռվ:

Նոր փաճառական ես դառել,  
Առըտուրը շնորհաւոր,  
Զին տռւել ես, ջորին առել,  
Առըտուրը շնորհաւոր,  
Զին տռւել ես, ջորին առել,  
Առըտուրը շնորհաւոր,  
Առըտուրը շնորհաւոր:

Ալիւրը ջորուն կրտարձես,  
Բաղար կը տանես կըծախես,  
Դեղին ոսկիք կըհաւաքես,  
Առըտուրը շնորհաւոր:

Բեղ կասեն՝ ուստա Առուշան<sup>1</sup>,  
Երբ կըլինիս լաւ ջաղացպան,  
Գըլուս-գըլուխ շահագ՝ կըտան,  
Առըտուրը շնորհաւոր:

Դամիւրջօղլի, շատ լաւ կանես,  
Որ Քեօրօղլուն գովաբանես,  
Ասես՝ լաւ փաճառական ես,  
Առըտուրը շնորհաւոր...

Դամիւրջօղլին այսպէս երկար կըշարունա-  
կէր, բայց Քեօրօղլին նրան միջահատում է ա-  
սելով՝ կատակի ժամանակ չէ, և ինքն է սկսում  
երգել այլ եղանակով և ահեղ ձայնով.

Ծառաս փախել է մինչ Արտբըստան՝  
Շուտ արէք, ուր որ է, փնտրեցէք բերէք,  
Շլնքին զարկելով, կապէք կոները,  
Արար ձիու վըրայ բարձեցէք բերէք:  
Շլնքին զարկելով՝ կապէք կոները,  
Արար ձիու վըրայ բարձեցէք բերէք.  
Արի, հոգիս, արի, արի, անուշիկ...

<sup>1</sup> Քեօրօղլու խկական անունը Առուշան է: <sup>2</sup> Շա-  
հագ՝ է առում աղալու համար տռւած վարձը, որ մի  
յայտնի չափով տրւում է աղացւող հատիկներից:

Իր գործած յանցանքը դրէք իր վրդին,  
Որ չասեն անմեղ էր, իզուր պատժեցին.  
Մորթեցէք եղան պէս, քերթեցէք կաշին,  
Միսը մասմաս արէք, ջարդեցէք բերէք:

Քեօրօղին եմ, ես չեմ մնալ ջաղացպան,  
Իմ Դուռթին երբէք չի տիրիլ Համզան,  
Գետնի տակն էլ լինի, հանեցէք նրան,  
Չիու պոչից կապած՝ քաշ արւէք բերէք:

Ինչ ասել կուզի, որ Քեօրօղու հրամանը  
շուտափոյթ կատարւեց: Քեօրօղուն պատահած  
այս արկածը պատմում է և ուրիշ ձեռվ:

Մանօրութիւն: Քեօրօղու բոյոր երգերը երեք ե-  
ղանակ ունին միայն: Այստեղ բերած երեք երգերից  
ամեն մէկը չոկ եղանակ ունի, և այդ երեսում է երգե-  
րի ձերից և տողերի չափից: Երգելին՝ առաջին տան  
կազմութիւնը պէտք է տալ և միւս տնկրին:

Քեօրօղին առաջանաւու այս այլ  
մէջ մորթին է առան և մասն ան-  
դամար վանակար ուրիշ պատ-  
ճակն ունի զարգացնելի պահանակնե-  
տիւնը և մասն առաջանաւու այս այլականը:

Ք Ե Ս Թ Ո Վ Լ Ո Ւ Թ Ո Ւ Ի Ր Ը

(Աւանդութիւն)

Քեօրօղին գեռ ևս տասնըշորս տարեկան  
մի պատանի՝ հորթարած է լինում: Մէկ անգամ  
մի փախուստ տւող հորթի ետևից քար է գցում,  
որ յետ դարձնէ, քարը գիպչում է հորթին և  
գնդակի պէս միջովն անցնում: Հորթը սատկում  
է, իսկ նրա աէրը պահանջում է իր ապրանքի  
գինը: Քեօրօղու հայրը, որ թէպէտ կուրացած՝  
բայց շատ փորձառու մարդ է լինում, ասում է  
որդուն:

—Որդի, վսաս չունի, մենք կը վճարենք  
հորթի գինը, եթէ ինձ կը հասցնես այն հորթա-  
պան քարը: Այն քարը մի հորթից շատ աւելի  
կարծէ:

Որդին բերում է քարը և տալիս հօրը:

Հայրը շօշափում է քարը և ծանր ու թեթէ  
անելով՝ նկատում է, որ քարը իր ծաւալի հա-  
մեմատութեամբ շատ ծանր է:

—Միթէ այս քարը չի պսպղում, — հարցնում  
է որդուն:

—Այս, հայր, պատասխանում է որդին:

«Սա կայծակ է», ասում է ծերունին իր մաքումը, բայց որդուց գաղտնի է պահում այդ: (Ան ժամանակները մթնոլորտից վայր ընկած մետաղախառն քարերը համարւում էին երկնքից վայր ընկած կայծակ):

Ծերունին վերցնում է այդ քարը և գնում է մի ուրիշ զիւղ, որտեղ թուր շինող լաւ վարպետներ են լինում, որ նորագիւտ մետաղից մի թուր շինել տայ: Թուրը շինել տալուց առաջ, նոյն կտորից մի բիզ է շինել տալիս և պահում մօտք:

Վարպետները շատ դժւարութեամբ են կարողանում թուրը շինել, և երբ որ վերջացնում են, սկսում են փորձել նրա յատկութիւնը: Խփում են վերանի, քարի, երկաթի, բոլորն էլ կտրատում է պահնը պէս:

Այս որ տեսնում են վարպետները, մտածում են որ թուրը սեփականեն և նրա տեղ մի հասարակ թուր տան: Կոյր ծերունին որ գալիս է թուրն ստանալու, նրան մի ուրիշ թուր են տալիս: Ծերունին սկսում է շօշափել, փորձում է ճկունութիւնը տեսնում է, որ պէտք եղածի չափ չի ճկում, գրանից հանում է բիզը որ այնպէս է ծակում թուրը և անցնում միւս կողմը, ինչպէս ասեղը շորի միջով:

—Այս իմ թուրը չէ, ասում է, —ուեք իմ թուրը:

Վարպետները տեսնում են որ կոյրը վաղօրոք իր զգուշութիւնը բանեցրել է, թրի կառրից բիզ շինել տալով, տալիս են իսկական թուրը: Ծերունին փորձում է բզովը, գտնում է անմատչելի: Փորձում է ճկունութիւնը, գտնում է այնքան ճկուն, որ կարող է կլորել և դնել ծոցումը:

Այս է ահա իմ թուրը, ասում է և շինելու վարձը վճարում:

Երբոր թուրը իր ձեռքով դնում է պատեանի մէջ, նա այնպէս է ամրանում, որ էլ հանել չէր կարող, եթէ ուղենար, բայց այդ չի իմանում ինքը: Այդ խորամանկութիւնը բանեցրել էին վարպետները, որ ճանապարհին ձեռքիցը խին իբրև անծանօթ աւագակներ:

Ծերունին ճանապարհ է ընկնում: Ճանպի կիսումը վարպետները համսում են ետեիցը և ուզում են թուրը խլել: Ծերունին ուզում է պաշտպանել, ուզում է թուրը պատեանից հանել, դուրս չի գալիս:

—Է՞ն, վսաս չունի, թող դուրս չըգայ, ասում է ծերունին, —«Եթէ սա իմ թուրն է, պատեանովն էլ կը կտրի»:

Այս ասելով՝ վրայ է բերում թուրը պատեանով, և երկուսի էլ զլուխը թոցնում է:

Այդ ժամանակները դեռ վառողը չէր գըտնւած, քաջերի սահմանը իրանց թուրն էր: Երբ որ ծերունու որդին Ուշշանը հասունացաւ և յայտնի դարձաւ Քեօրօղի (կոյրի որդի) անու-

Առվ, և հօր պատրաստած թրին տիրացաւ, նա  
ոչ միայն շատ լաւ հասկացաւ նրա յարգը, այլ  
այնպէս սիրահարւեց վրան, որ վերջը մի եր-  
դով գովաբանեց նրան, ինչպէս և իր Ղոաթին.  
Ահա այդ երգը:

Իմ աշքիս լոյս, իմ հոգիս, թուր,  
Դու իմ անգին ալմազ մաքուր, թուր,  
Զը կայ ոչինչ աշխարքումս  
Որ քեզ համար լինի ամուր, թուր...  
Թուր, թուր, թուր,  
Իմ սիրական թուր:

Քո մէջն է իմ ուժն ու հոգին,  
Դու ես շունչ տալիս իմ կեանքին, թուր.  
Առիւծը դառնում է աղւէս,  
Երբ շողում ես դու իմ ձեռքին, թուր.  
Թուր, թուր, թուր,  
Իմ գովական թուր:

Դու ես իմ տէրն, իմ պահողը,  
Իմ մուրազին հասցնողը, թուր,  
Աննման նիգեար խանումիս  
Դու եղար ինձ մօտ բերողը, թուր.  
Թուր, թուր, թուր,  
Իմ պատւական թուր...

Քեզ եմ պաշտում, քեզ եմ սիրում,  
Գոհարներով քեզ զարդարում, թուր.

Սրաիս բոլոր խորհուրդները  
Քեզ եմ միայն յանձնարարում, թուր.  
Թուր, թուր, թուր,  
Իմ աննման թուր...

Խեղճ Քեօրօղիս ի՞նչ կանէի,  
Եթէ քեզանից զրկւէի, թուր.  
Սազը ձեռիս արտասւելով՝  
Քեզ միայն, քեզ կը փնտրէի, թուր.  
Թուր, թուր, թուր,  
Իմ գովական թուր:



«Ազգային գրադարան»



NL0329693

ADM.

3-220

MBI

8M10

ԳԻՒՆ Ե 15 Կ.

18.419